Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 2239 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N704-Ա – N722-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 12-ի N723-Ա, N724-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի N725-Ա – N728-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 14-ի N729-Ա – N735-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 15-ի N736-Ա - N742-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N706-Ա, N707-Ա, 708-Ա, N709-Ա և N710-Ա որոշումների դրույթներում հանձնաժողովների կազմի պաշտոնները թերի են գրառված։
2. N711-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին։
3. N715-Ա, N736-Ա և N741-Ա որոշումների նախաբաններում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթները թերի է գրառված։
4. N724-Ա որոշման մեջ անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ.Նիկոյան